

Կարսի պայմանագիրն ու Հայաստանի Սովետական (Խորհրդային) Սոցիալիստական Հանրապետության իրավական կարգավիճակն ըստ միջազգային իրավունքի

Արա Պապյան

Կարսի պայմանագիրը (13 հոկտեմբերի, 1921թ.) հույժ կարևոր նշանակություն ունի մերօրյա հայոց պետականության համար: Ոմանց թյուր ըմբռնումների, և տասնամյակներ տևած նենգափոխումների պատճառով այսօր տիրում է այն սխալ տեսակետը, որ, իբր, Կարսի պայմանագիրն է որոշում, այսպես կոչված, հայ-թուրքական սահմանը: Միջազգային իրավունքի տեսանկյունից այդ փաստաթղթի քննումը, ակնհայտ է դարձնում, որ այն երբեք չի ունեցել և չունի իրավական ուժ, հետևաբար չի ստեղծում պարտավորություններ կողմերի համար:

Հայաստանի Սովետական (Խորհրդային) Սոցիալիստական Հանրապետության (հետայսու՝ ՀՍՍՀ) իրավական կարգավիճակի և Կարսի պայմանագրի (13 հոկտեմբերի, 1921թ.) օրինականության և իրավականության (legitimacy and legality) հարցերը սերտորեն շաղկապված են իրար: Ըստ ՄԱԿ-ի պաշտոնական ուղեցույց-ձեռնարկի, «միջազգային պայմանագրերը համաձայնություններ են *միջազգային իրավունքի սուբյեկտների* միջև, որոնց միջոցով նրանք ստեղծում, փոփոխության են ենթարկում կամ դադարեցնում են փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները» [1]: Այսինքն, պայմանագրի օրինականության և իրավականության համար անհրաժեշտ է, որ պայմանագիրը կնքող կողմերից յուրաքանչյուրը լինի միջազգային իրավունքի սուբյեկտ, այսինքն՝ լինի միջազգայնորեն ճանաչված պետության օրինական կառավարության լիազոր ներկայացուցիչ [2]: Այս տեսանկյունից էլ անդրադառնանք Կարսի պայմանագիրը կնքած կողմերից մեկի՝ ՀՍՍՀ, ինչպես նաև Հայաստանի անունից պայմանագիրը ստորագրողների, կարգավիճակներին, դրանց իրավական հետևանքներին կամ հետևանքների բացակայությանը:

Հայաստանի Սովետական (Խորհրդային) Սոցիալիստական Հանրապետության գոյությունը, հետևաբար նրա իրավական կարգավիճակը, բաժանվում է երկու ժամանակահատվածի.

ա) 1920թ. դեկտեմբերի 2-ից մինչև 1922թ. դեկտեմբերի 30-ը, ՀԽՍՀ կոչված տարածքի առանձին, բայց ոչ անկախ գոյության, ժամանակահատված և

բ) 1922թ. դեկտեմբերի 30-ից մինչև 1991թ. սեպտեմբերի 21-ը, Սովետական (Խորհրդային) Սոցիալիստական Հանրապետությունների Միություն պետության կազմում «Հայաստանի Սովետական (Խորհրդային) Սոցիալիստական Հանրապետություն» վարչատարածքային միավորի գոյության ժամանակահատված:

Հարցի անգամ հպանցիկ քննումը, ակնհայտ է դարձնում, որ միջազգային իրավունքի տեսանկյունից, երբեք չի եղել «Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն» պետություն, հետևաբար չի եղել միջազգային իրավունքի նման սուբյեկտ: Պետության ճանաչումը մեկ այլ պետության կողմից վճռորոշ նշանակություն ունի պետության կայացման գործում [3]: ՀՍՍՀ-ն իր գոյության և ոչ մի հատվածում երբեք ճանաչված չի եղել որևէ օրինական ճանաչում ունեցող պետության լիազոր իշխանությունների կողմից: ՀՍՍՀ-ի, այսպես կոչված, ճանաչումները չեն առաջացրել որևէ իրավական հետևանք, քանի որ իրենց հերթին բխել են չճանաչված երկրներից կամ վարչախմբերից:

Որպեսզի ճանաչումն օրինապես համարվի այդպիսին, այն պետք է կատարվի իր հերթին օրինականորեն ճանաչված միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից [4]: Օրինակ, 1920թ.-ին սովետական կառավարությունը ճանաչեց Բալթյան երկրները, սակայն այդ ճանաչումը չընդունվեց Գաշնակից ուժերի կողմից, այն հիմնավորմամբ, որ սովետական կառավարությունն իր հերթին օրինապես ճանաչված չէր [5]: Աբխազիայի կողմից Օսեթիայի ճանաչումը, կամ հակառակը, չի առաջացնի իրավական հետևանք, քանի որ ճանաչող կողմն իր հերթին դեռ չունի միջազգային իրավական ճանաչում: Առանց ճանաչման կառավարություններն իրավական տեսանկյունից գոյություն չունեն, հետևաբար որևէ իրավական գործունեություն (պայմանագրերի կնքում, քաղաքացիության շնորհում կամ զրկում, մասնակցություն դատական գործընթացին և այլն) չեն կարող ծավալել [6]:

Կանխելով այն շահարկումները, թե իբր ՀՄՄՀ-ն անկախ երկիր էր, քանի որ այդպես էր գրված մի շարք ներքին օգտագործման փաստաթղթերում (օրինակ՝ ՀՄՄՀ կամ ՄՄՀՄ սահմանադրություններում)՝ անհրաժեշտ է ընդգծել, որ միջազգային իրավունքում միակողմանի իրավական փաստաթղթերը (unilateral legal acts), ինչ ձևով էլ դրանք արտահայտված լինեն (հռչակագրերի, հայտարարագրերի, հաղորդագրությունների, սահմանադրությունների և այլն), չեն կարող շնորհել ավելի շատ իրավունքներ, քան դա հասնում է ըստ միջազգային իրավունքի [7]:

Ընդհանրապես, միջազգային իրավունքը շատ հստակ է պետականության հարցում: Մասնավորապես, Մոնտեվիդեոյի Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին 1933թ. կոնվենցիայի (Convention on Rights and Duties of States, 1933) առաջին հոդվածն ամրագրում է պետականության 4 չափորոշիչները, որոնք պարտադիր են միջազգային իրավունքի սուբյեկտ լինելու համար: Դրանք են.

ա) մշտական բնակչություն,

բ) որոշակիացված տարածք,

գ) կառավարություն և

դ) այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողություն:

(Article I: a) a permanent population; b) a defined territory; c) government; and d) capacity to enter into relations with the other States) [8].

Վերջին չափորոշիչը համարվում է ամենակարևորը [9]: Ուզում են շեշտել, որ խոսքը գնում է ոչ թե պարզապես միջպետական հարաբերությունների իրավունքի դատարկախոս հայտարարության մասին, այլ դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնելու իրական կարողության մասին, այսինքն՝ օտար երկրներում, ինչպես նաև սեփական երկրում օտար, դեսպանատների բացման և գործունեության ծավալման մասին:

Այսու, Կարսի պայմանագիրը կնքելու պահին (13 հոկտեմբերի, 1921թ.) չկար «Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն» օրինականորեն ճանաչված պետություն, հետևաբար՝ միջազգային իրավունքի սուբյեկտ: Բնականաբար այդ տարածքային միավորը, ինչպես նաև նրանում իշխանություն հաստատած վարչախումբը, չունեին որևէ միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն:

Հիմա անդրադառնանք ՀՄՄՀ-ում 1920թ. դեկտեմբերի 2-ից իշխանություն հաստատած, ավելի ճիշտ իշխանության բերված, վարչախմբի իրավական կարգավիճակին: Սա կարևոր է, քանի որ այդ կարգավիճակից է ածանցվում Հայաստանի անունից Կարսի պայմանագիրը ստորագրած անձանց լիազորությունները:

Հանրահայտ իրողություն է, որ Հայաստանի Հանրապետության օրինական իշխանությունները, ռուս-թուրքական համադրված ռազմական գործողությունների հետևանքով [10] հայտնվելով անելանելի վիճակում, ստիպված էին ընտրել չարյաց փոքրագույնը և իշխանությունը փոխանցման մասին համաձայնագիր կնքել «Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. լիազոր ներկայացուցիչ ընկ. Լեգրանի» հետ, որը հանդես էր գալիս «Ռ.Կ.Կ.Կ.Կ.-ի (Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի) լիազորությամբ, ի դեմս Ռուսաստանի Խորհրդային կառավարության» [11]:

Միջազգային իրավունքի տեսանկյունից այստեղ կարևորն այն է, որ Հայաստանում իշխանության բերված մարդկանց խումբը, որը նախապես հանդես էր գալիս Հայիեդկոմ անունով [12], ակնհայտորեն օտարերկրյա, այն էլ անօրինական, վարչակարգի դրածո վարչախումբ էր: Կարսի պայմանագիրը ստորագրած վարչախմբի ներկայացուցիչների Ասքանազ Մռավյանի և Պողոս Մակինցյանի, լիազորությունը խարսխված էր ոչ թե օրինական իշխանության, այլ երկիրը բռնազավթած օրարերկրյա բանակի քաղաքական ղեկավարության կամքի վրա և իրականացվում էր պարտադրանքի տակ: Դա է փաստում նաև այն իրողությունը, որ նման քաղաքական պարտադրանքի պարտավորությունը մինչ այդ ամրագրվել էր Մոսկվայի բոլշևիկ-քեմալական 1921թ. մարտի 16-ի պայմանագրի 15-րդ հոդվածում [13]: Պատմական անվիճելի փաստ է, որ Հայաստանի Հանրապետությունը բռնազավթվել էր 1920թ. օգոստոսի 24-ին կնքված ռազմական դաշնագրով [14] նախատեսված բոլշևիկ-քեմալական գործողությունների հետևանքով [15] և այդ միասնական ուժով Հայաստանում իշխանության էր բերվել անթաքույց խամաճիկային վարչախումբ: Այս առումով միջազգային իրավունքը միանշանակ է. զավթիչ ուժի և նրա կողմից իշխանության բերված խամաճիկային կառավարության միջև (a puppet government) կնքած որևէ պայ-

մանագիր կամ բռնագավթման ժամանակ երկրի տարածքի որևէ մասի գիջում հետևանքագործ է (are not effective) [16]: Ավելին, երկրի համար ընդհանրապես իրավական հետևանք չի կարող առաջացնել որևէ պայմանագիր կամ պարտավորություն, եթե տվյալ երկրի պաշտոնյաները բացահայտորեն գործել են օտար ուժի հրահանգով [17]:

Խիստ խնդրահարույց է նաև Կարսի պայմանագրի օրինապես վավերացված լինելու հարցը: Ըստ պայմանագրի 20-րդ հոդվածի՝ պայմանագիրը, կնքված Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի կառավարությունների միջև, ենթակա էր վավերացման: Սակայն մեզ չի հաջողվել տպագիր աղբյուրներում գտնել հիշատակում ՀՍՍՀ որևէ կառույցի կողմից Կարսի պայմանագրին պաշտոնական անդրադարձած, առավել ևս վավերացրած, լինելու մասին: Կարսի պայմանագրի վերաբերյալ սովետական աղբյուրները [18] նշում են միմիայն վավերագրերի փոխանակման մասին (Երևան, 11 սեպտեմբերի, 1922թ.), սակայն չեն նշում Հայաստանի, Վրաստանի կամ Ադրբեջանի կողմից պայմանագրի վավերացման մասին: Օտար աղբյուրները նշում են, որ Կարսի պայմանագիրը վավերացվել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից (16 մարտի, 1922թ., օրենք թիվ 207) [19] և, ի դեմս Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի՝ ՌՍՖՍՀ-ի կողմից [20]: Եթե սա իրողություն է, ապա, ըստ այդմ, Կարսի պայմանագիրը անօրինական է ու անվավեր նաև վավերացման գործընթացի կոպիտ խախտման պատճառով: Ըստ միջազգային իրավունքի հստակ է. *յուրաքանչյուր երկիր կարող է որևէ պայմանագիր վավերացնել միմիայն իր անունից և իր համար ու չի կարող դա անել ուրիշի փոխարեն:*

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

Կարսի պայմանագիրն անօրինական է ու անվավեր կնքման պահից, քանի որ.

1. Պայմանագիրը կնքող կողմերից և ոչ մեկը չի հանդիսացել միջազգային իրավունքի սուբյեկտ:
 - ա) ՀՍՍՀ երբեք չի եղել պետություն և, բնականաբար, երբեք ճանաչված չի եղել որպես այդպիսին: 1920-1922թթ. Հայաստանն ունեցել է բռնագավթված տարածքի [21] (occupied territory) կարգավիճակ [22], իսկ 1922թ.-ից, Սովետական Միության կազմում Հայաստանի ընդգրկումով, մինչև ՍՍՀՄ վախճանը՝ 1991թ., բռնակցված տարածքի (annexed territory) կարգավիճակ [23]: Հետևաբար, միջազգային իրավունքի տեսանկյունից ՀՍՍՀ-ն ի սկզբանե չի ունեցել միջպետական հարաբերություն իրականացնելու որևէ կարողություն և իրավասություն, մասնավորապես՝ միջազգային պայմանագիր կնքելու լիազորություն:
 - բ) Կարսի պայմանագիրը ստորագրած Զյազիմ Կարաբեքիրը, 1921թ.-ին չէր հանդիսանում իրավականորեն ճանաչված թուրքական պետության լիազոր ներկայացուցիչը, այլ թուրքական ռազմական դատարանի կողմից մահվան դատապարտված, պատերազմի հանցագործ Մուստաֆա Քեմալի մարտախմբի ներկայացուցիչն էր: Մուստաֆա Քեմալը 1921թ.-ին պարզապես փախուստի մեջ գտնվող քրեական հանցագործ էր: Մուստաֆա Քեմալը, երկրի օրինական իշխանությունների դեմ խռովություն բարձրացնելը համար, դեռևս 1919թ. օգոստոսի 9-ին, զրկվել էր զինվորական և քաղաքացիական կոչումներից և բոլոր պարգևներից: Իսկ 1920թ. ապրիլի 11-ին կայսրության բարձրագույն կրոնավորի՝ շեյխ-ուլ-իսլամի, ֆեթվայով (կոնդակով) մահվան էր դատապարտվել: Նրա նկատմամբ նույն տարվա մայիսի 11-ին մահապատժի վճիռ էր կայացրել նաև թուրքական ռազմական դատարանը [24]: Այս դատավճիռը 1920թ. մայիս 24-ին հաստատվել էր սուլթանի կողմից: Ի դեպ, Քեմալի և քեմալականների նկատմամբ քրեական հետապնդումը կարճվել է միայն 1923թ. հուլիսի 24-ին՝ ներման համապատասխան հայտարարագրով [25]:
2. Կարսի պայմանագիրը ստորագրելու գործընթացը ոտնահարել է մի շարք jus cogens-ներ: Ըստ այդմ, եթե սահմանի հստակեցման և հաստատման գործընթացը խախտել է միջազգային իրավունքի որևէ անբեկանելի սկզբունք՝ jus cogens, ապա տվյալ սահմանը անօրինական է և անվավեր (illegal and void) [26], քանի որ անօրինական և անվավեր է այն ամրագրող պայմանագիրը: Այս սկզբունքն ամրագրված է Վիեննայի Պայմանագրերի օրենքի մասին միջազգային կոնվենցիայի 53-րդ հոդվածի մեջ: (*Article 53. Treaties conflicting with a peremptory norm of general international law (“jus cogens”) - The treaty is void if, at the time of its conclusion, it conflicts with a peremptory norm of general international law.*)

Հղումներ

1. Manual of Terminology of Public International Law, (by Isaac Paenson), United Nations, New York, 1983, p. 38.
2. Այսպես կոչված «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության» իրավական կարգավիճակին մենք

- մասնակիորեն անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածներից մեկում, ուստի դրան հանգամանալից չենք անդրադառնա նորից: Տե՛ս՝ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի (16 մարտի, 1921թ.) փորձաքննությունն ըստ միջազգային իրավունքի («Ազգ», 16 մարտի, 2007թ., էջ 4):
3. Williams S.A., De Mestral A.L.C., *An Introduction to International Law*, Toronto and Vancouver, 1987, p. 44.
 4. Moore J.B., *Digest of International Law*, Washington, 1906, vol. I, p. 73.
 5. The Secretary of States /Colby/ to the Ambassador in Great Britain /Davis/, August 2, 1920, p. 462.). *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1920, v. III. pp. 461-3.*
 6. Ti-Chiang Chen, *The International Law of Recognition*, London, 1951, p. 138.
 7. Branimir M. Jankovic, *Public International Law*, New York, 1984, p. 271.
 8. Ian Brownlie, *Principles of Public International Law*, Oxford University Press, 5th edition, 2001, p. 70.
 9. Williams S.A., De Mestral A.L.C., *Ibid*, p. 45.
 10. ԱՄՆ Սենատի թիվ 245 բանաձևը (3 հունիսի, 1924թ.) միանշանակորեն ամրագրել է, որ Թուրքիան և Ռուսաստանը միասնաբար են գործել Հայաստանի կործանման ուղղությամբ: (Turkey joined with Soviet Russia in the destruction of the Armenian State, brutally murdered hundreds of thousands of Armenians ... Senate Resolution, 245, June 3, 1924. *The Armenian Review*, vol. 30, No. 3-119, 1977, p. 286.):
 11. Վրացեան Ա., Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 501: Անգլերեն տեքստի համար տե՛ս՝ Simon Vratzian, *How Armenia was Sovietized*, (part IV), *The Armenian Review*, 1948, October, (vol. I, No. 4), p. 89-90.
 12. 1921թ. մայիսի 21-ին Հայիեդկոմը վերանվանվել է ՀՍՍՀ Ժողովուրդի:
 13. «Ռուսաստանը պարտավորվում է Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում անպատճառ ճանաչվեն սույն Պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջաբար վերաբերում են իրենց»: (Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 504):
 14. Տե՛ս Էնվեր փաշայի Մոսկվայից գրված նամակը (26 օգոստոսի, 1920թ.), գերմանացի գեներալ Ֆոն Սեկտին (Von Seckt): Նա մասնավորապես գրում է. «Երեկ չէ առաջին օրը մենք ստորագրեցինք թուրք-ռուսական բարեկամության դաշնագիր: Այդ դաշնագրի հիման վրա ռուսները մեզ օգնելու են փողով և բոլոր այլ միջոցներով»: (The other day we signed a Turco-Russian friendship pact. On the basis of that pact, the Russians will help us with money and all other means.) [Vernian V., *Two Little Known Letters of Enver Pasha, Written from Moscow*, *The Armenian Review*, vol. I, No. 3, Summer, July, 1948, p. 57.]
 15. Բոլշևիկների և քեմալականների սերտ համագործակցության մասին տե՛ս՝ Richard G. Hovannisian, *Armenia and the Caucasus in the Genesis of the Soviet-Turkish Entente*, *The Armenian Review*, vol. 27, 1-105, Spring, 1974, p. 33-52.
 16. Wilfried Fiedler, *Continuity*, in: R. Bernhardt (ed.), *Encyclopedia of Public International Law*, v. I, Amsterdam, 1992, p. 808.
 17. Ian Brownlie, *Ibid*, p. 449.
 18. Տե՛ս, օրինակ՝ *Документы внешней политики СССР*, т. 4, Москва, 1960, с. 429; Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 527:
 19. Gunduz Okcun A., *A Guide to Turkish Treaties (1920-1964)*, Ankara, 1966, p. 4.
 20. *Soviet Treaty Series*, v. I (1917-1928), Compiled and edited by Leonard Shapiro, The Georgetown University Press, Washington, D.C., 1950, p. 136.
 21. Report [Pursuant to H. Res. 346 and H. Res. 438], *Communist Takeover and Occupation of Armenia*, 83rd Congress 2nd Session, House of Representatives, Rept. 2684, Part 8, 31 December 1954, p. 14.
 22. Ըստ միջազգային իրավունքի, բռնազավթող ուժը չի հանդիսանում տվյալ երկրի *de jure* իշխանությունը, այլ միայն իրականացնում է *de facto* կառավարում, հետևաբար այն լիազորված չէ հանդես գալու երկրի անունից: (“The authority exercised by an occupying power is, as far as international law is concerned, a *de facto*, not *de jure* authority. ... The occupying power’s ability to enforce respect for its legitimate interests is not an authority to create law.” Michael Bothe, *Occupation, Belligerent*, in: R. Bernhardt (ed.), *Encyclopedia of Public International Law*, vol. III, Amsterdam, 1997, p. 764.)
 23. “Annexation is the forcible acquisition of territory by one State at the expense of another”. (Rudolf L. Bindschedler, *Annexation*, in: R. Bernhardt (ed.), *Encyclopedia of the Public International Law*, Amsterdam, (1992) v. I, p. 168).
 24. Кемаль Паша, *Дипломатический словарь*, Москва, 1948, т. 1, с. 776.
 25. *Amnesty Declaration, and Protocol*, signed 24 July 1923, at Lausanne.
 26. Michael Bothe, *Boundaries*, in R. Bernhardt (ed.), in: *Encyclopedia of Public International Law*, v. I, Amsterdam, 1992, p. 448.